№ 74 Ապրիլի 28 (Մայիսի 10) 1881 Ապրիլի 28 (Մայիսի 10) № 74

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գին 10 բուլ. կէս տարվան 6 բուլ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թղթակցում գրվում են միմիայն խմբագրատան ՝ի անուն.

Ստորագրությունը պիտի են ուղղվի
Редакція «Мшака».

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն տեղում:

Յայտարարութիւնների համար վճարվում են
խրատանոցը բաժին 2 կոպէկ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ներքևս պատրիարքի հրաժարականը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Բուլգարիայի ազատ արվեստները. Թիւրքիա. Ֆրանսիա. Նամակ Թիւրքիայից.—ՀՈՒՍԱԳԻՐՆԵՐ.— ՏԵՂԵԿԱՊԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.—Էմիլ դը Ժիրարդէն.

ՆԵՐՍԷՍ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԸ

Կ. Պոլսի Հայոց Հասարակական կարծիքը և թիւրքահայ լրագրութիւնը զբաղված են այս րոպէիս Ներսէս պատրիարքի հրաժարականի խնդրով:

Պատրիարքը յայտնում է հրաժարական տալու ցանկութիւնը նոյն իսկ այն ժամանակ, երբ յունաց խնդիրը վերջանալու վրա է և հաւանական է որ նրանից յետոյ հերթական խնդիրը՝ պէտք է լինի Հայոց խնդիրը:

Այդ պատճառով Ներսէսի հրաժարականը, որ Հայոց խնդրի համար մեծ ծառայութիւններ արաւ, այլ և այլ գուշակութիւնների առիթ է տալիս: Մինչև կարծում են թէ պատրիարքը շատ լաւ է հասկանում թէ իր յարաբերութիւնները Ռ. Դրան հետ միշտ լարված լինելով, նա չէ կարող Հայոց խնդրի խաղաղ լուծելուն այն օգուտը բերել, որ կը բերէր նրա տեղը մի այլ մարդ, որ նոր լինելով, գեռ ևս կրքէր ոչինչ թշնամական յարաբերութիւններ ունեցած չէ թիւրքաց կառավարութեան հետ: Մերիներ կարծում են որ Ներսէսի հրաժարականի պատճառը արքայական անձնական տկարութիւն է միայն: Վերջապէս և այն միտքն են յայտնում որ զգուելով նոյն իսկ Հայերի կողմից կատարվող մատնութիւններից և անողորմաբար լարվող խնդրիցներից իր անձի դէմ, պատրիարքը անկարող է այլ ևս ծառայել ազգին:

Ոչայց «Մշակի» № 70 մէջ տպված մեր թղթակից Հայկակի նամակից երևում է որ Ներսէսը դարձեալ ուներ բազմաթիւ կուսակիցներ և հաւանական է, որ հրաժարական տալուց յետոյ նա կրկին պատրիարք կընտրվի ազգի կողմից: Այն ժամանակ, ի հարկէ, Ներսէսի դրութիւնը աւելի էլ ամուր կը լինի, երբ, եթէ այդպէս կարելի է ասել, ազգի ընդհանուր ձայնատուութեամբ նորից կընտրվի: Դարձեալ թիւրքիայի Հայերը ցոյց կը տան որ յարգում են Ներսէսին և միայն նրան են ճանաչում իրանց ազգային շահերի պաշտպան, միայն նրան են համարձակվում յանձնել իրանց վիճակի կարգադրելը և Հայոց խնդրի դատը:

Երևում հաւանական է որ արքայական հրաժարականը փոխառնակ թեւակոխելու նրա նշանակութիւնը, աւելի էլ կամրացնի նրա դիրքը և աւելի էլ միջոց կը տայ նրան գործել յօգուտ Հայոց ազգի:

Եթէ մեր թոյլ ձայնը կարող է լսելի լինել Կ. Պոլսի մէջ, խորհուրդ ենք տալիս թիւրքաց Հայերին, եթէ հարկ լինի նորից քաւէ տալ Ներսէսին, որ մեր արքայական անձնական տկարութիւն է միայն: Վերջապէս և այն միտքն են յայտնում որ զգուելով նոյն իսկ Հայերի կողմից կատարվող մատնութիւններից և անողորմաբար լարվող խնդրիցներից իր անձի դէմ, պատրիարքը անկարող է այլ ևս ծառայել ազգին:

Ոչայց «Մշակի» № 70 մէջ տպված մեր թղթակից Հայկակի նամակից երևում է որ Ներսէսը դարձեալ ուներ բազմաթիւ կուսակիցներ և հաւանական է, որ հրաժարական տալուց յետոյ նա կրկին պատրիարք կընտրվի ազգի կողմից: Այն ժամանակ, ի հարկէ, Ներսէսի դրութիւնը աւելի էլ ամուր կը լինի, երբ, եթէ այդպէս կարելի է ասել, ազգի ընդհանուր ձայնատուութեամբ նորից կընտրվի: Դարձեալ թիւրքիայի Հայերը ցոյց կը տան որ յարգում են Ներսէսին և միայն նրան են ճանաչում իրանց ազգային շահերի պաշտպան, միայն նրան են համարձակվում յանձնել իրանց վիճակի կարգադրելը և Հայոց խնդրի դատը:

Երևում հաւանական է որ արքայական հրաժարականը փոխառնակ թեւակոխելու նրա նշանակութիւնը, աւելի էլ կամրացնի նրա դիրքը և աւելի էլ միջոց կը տայ նրան գործել յօգուտ Հայոց ազգի:

Եթէ մեր թոյլ ձայնը կարող է լսելի լինել Կ. Պոլսի մէջ, խորհուրդ ենք տալիս թիւրքաց Հայերին, եթէ հարկ լինի նորից քաւէ տալ Ներսէսին, որ մեր թիւրքիահայ ազգայիները նորից միաձայն ընտրեն Ներսէսին, այն մտքով որ այդքան մեծ ծառայութիւններ արաւ Հայոց ազգին, ազգի ճգնաժամի ժամանակ, դրաւելով ոչնչացնելով նրա գէմ, ուրեմն և Հայոց ազգի շահերի դէմ լարված բոլոր խնդրիցները և կատարվող ստորերկրեայ մատնութիւնները:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Правит. Вѣстн.» լրագրում հրատարակված է Բարձրագոյն հրաման որով թոյլ է տրվում 10 տարեկանից մինչև 18 տարեկան հասակի ուսանողներին գնալ զորանոցներ զորանոցներին և առանց Բարձրագոյն թոյլտուութիւն ստանալու.

—

«Новости» լրագիրը հաղորդում է որ չնայած սովամեղու է գտնվում 16 քաղաքական յանցագործների վրա.

—

Կառավարութիւնը անգիտութիւն ստանալով որ վիլնա քաղաքումն է գտնվում յեկատերինոսլաւի կուսակցութիւնի գնդապետական մասնաժողովը և որ այդ քաղաքում գաղտնի տպարան կա, ուզարկեց այնտեղ մի քանի պոլիցիական ատաքանաներ և խուզարկիներ. Արդէն մի քանի կալանաւորութիւններ կատարվեցան վիլնայում, ինչպէս հաղորդում են լրագիրները.

—

«Порядокъ» լրագիրը հաղորդում է որ գիտաւորութիւն կայ Լենտատանի մի քանի գիմնազիաներում ուսուցանել լենական լեզուի դասատուութեան ժամերը.

—

«Голосъ» լրագրի խմբագիր-հրատարակչի հրամանին վատաղաւոր կերպով հիւանդացաւ.

—

«Новое Время» լրագիրը հաղորդում է որ Դանիայում գտնվեցաւ մի մարդ, որ յայտնել է թէ պատրաստ է զրկելու մանկան գտատապարված Գեսէ Գիշիմանի երեխային. Ինչ մարդը, կենում է Կոպենհագէնի մէջ. շատ հարուստ է և անպատակ է. Ամեն նա տարիքով է, բայց իր երիտասարդութեան ժամանակ Իտալիայում էր կացել. Նա ասրդէն նամակով գիմեց Ս. Պետերբուրգ.

—

Ինչպէս հաղորդում է «Нов. Время» լրագիրը, գիտաւորութիւն կայ Ս. Պետերբուրգի գուսանների գանձնեմում իրագործել կիրակնօրեայ ժողովրդական մշտական գասախօսութիւնները.

—

«Голосъ» լսել է որ գիտաւորութիւն կայ հեռացնել Ս. Պետերբուրգից բոլոր մուրացկանները.

—

Եկիտերինոսլաւ քաղաքից հաղորդում են հեռագրով, որ այս օրերս քաղաքի և մոտակայ գիւղերի ուսանողը յարձակվեցին հրէաների վրա և ջարդեցին նրանց, ոչնչացնելով հրէաների 100 տունը, նրանց խանութները և վիրաւորելով մոտ 200 հրէաներին. Հրէաներից մինը ազատված է. Մոտակայ տեղերից զորքերը հասնելով, կարգ վերականգնեցրին քաղաքում. Մոտ 400 մարդ կալանաւորված են.

—

Մեզ գրում են Մեծ-Ղարաբլիայից որ «Ճարտարութիւն» վերնագրով «Մշակի» առաջնորդող յոդուածի ազդեցութեան տակ գիւղի երիտասարդները ուշադրութեան են առնում հայ քահանաներին տարիման մի որոշ տոկոսի նշանակել տալ հասարակութեան կողմից.

—

Շնորհակալութեամբ ստացանք Լրեանից, որ Արզար Դուլամիրեանցից, նրա թարգմանութիւնը բժիշկ Իլիանու գրքի «Ինչ բան է ժանտախտը» վերնագրով.

—

Շնորհակալութեամբ ստացանք գեներալ Սոկոլնիցկու առանձին թռչուրը Բոսֆորի և Կ. Պոլսի մասին «Замѣтка о Босфорѣ и Константинополѣ» վերնագրով.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԷՄԻԼ ԴԷ-ԺԻՐԱՐԴԷՆ

—

Ֆրանսիական մամուլը կորցրեց տարագրական խոշոր ասմնասիրումը և տարանցաւոր ախտանիշերից մէկին՝ Էմիլ դը-Ժիրարդէնին. Եկա տարէ ասելի. Նա գրամանագի եռանդով և քաջութեամբ պաշտպանում էր մամուլի անեպայման ազատութիւնը բարեկամների և թշնամիների դէմ, տրագեռականների և հանրապետականների դէմ, Ֆրանսիայում փոփոխվող գանգան կառավարութիւնների դէմ. սկսած Լուի Ֆիլիպից և վերջացնելով Ներկայ հանրապետութեամբ.

Ֆրանսիական նշանաւոր պարլիզիստ Էմիլ դը-Ժիրարդէն ծնվեցաւ Շվեյցարիայում անոյտ ծնողներից. Նրա ծննդեան տարիքը մի քանիները 1802 թիւն են համարում. Մինչև 1827 թիւը նա յայտնի էր Էմիլ Դէշամանը անունով. Նոր տարուց յետոյ գեներալ Ալէքսանդր Ժիրարդէն պատանեաստանների ժողովի յանձնաժողովի նստում յայտնեց, որ Էմիլի իսկական անունը Ժիրարդէն է. Այդ անունով առաջին անգամ Էմիլ Ժիրարդէն գրականական հանդէս դուրս եկաւ հնամենի երկու հնգնակութիւններով «Emile» 1827 թ-ին և «Au hasard, fragments sans suite d'une histoire san fin» 1828 թ-ին. Մարտիմենակի մենիստարութեան ժամանակ գեղեցիկ արտահայտութիւնների անոյշ պարտոնը ունենալով. նա բաւական ազատ ժամանակ էր գտնվում գրականական հանդարտակ զբաղմունքի զբաղմունքներ համար. Նա երկու լրագիրներ հիմնեց, որոնք իրանց վրա գրգռեցին ընդհանուրի ուշադրութիւնը՝ «Le Voleur» 1828 թ-ին, և «La mode» 1829 թ-ին. 1830 թ-ից յետոյ, Էմիլ Ժիրարդէն հանգստացաւ. Թէ ինչ օգուտներ կարելի է տալ մամուլից, յանդգնաբար հրատարակում էր «Le journal des connaissances utiles» 1831 թ-ին, որը մի քանի ամսվայ մէջ 120.000 տարագրագրեր ունեցաւ. «Le journal des instituteurs primaires», «Le musée des familles», «L'Almanach de France», որը հիմնվելու օրից հրատարակվում էր մեկ միլիոն օրինակ. «Atlas de France par départements» և «Atlas universel.»

Վերոյիշեալ բոլոր հրատարակութիւնները, որոնք գուրս էին գալիս իրենց թէ «Société nationale pour l'emancipation intellectuelle» ընկերութեան կողմից. մեծ ազդեցութիւն ունեցան ժողովրդական կրթութեան զարգացման վրա. 1836 թ-ին յունիսի 1-ին գուրս եկաւ պարբերական քաղաքականութեան օրգան «La Presse» լրագրի առաջին համարը. Այդ լրագիրը մեկ ամբողջ յեղափոխութիւն գործեց լրագրական աշխարհի մէջ. ժիրարդէն յանձնած ամեն կողմից իրան պարտադրած առաջ քաղաքական թշնամիներով և հենց այդ ժամանակ նրա և «National» լրագրի խմբագիր Արման Կարրելի մէջ կռիւ պատահեցաւ, որից յետոյ մենամարտի հրաւիրեցին միմեանց և որին գալ գնաց տարագրագրեր Արման Կարրելը. Դա Էմիլ ժիրարդէնի վերջին մենամարտն էր, որովհետև այդ թշնամանքից յետոյ ինչքան էլ վիրաւորում էին նրան, նա ոչ ոքի մենամարտի չէր հրաւիրում. 1834 թ. ժիրարդէն Բուրգանդիայի կողմից պատգամաւոր ընտրվեցաւ, մի և նոյն ժամանակ մեզադրվելով կոչտանակերութեան մէջ. բայց արդարացաւ. 1839 թ-ին նա Մոլէի մենիստարութիւն էր պաշտպանում. Դիպուն մենիստարութիւնն նա բաւական երկար ժամանակ վարում էր «La Presse» լրագրի պաշտպանութիւնը, որի գաղափարները նրան այնքան զգայի թւաց, որ հիմնեց երկու անվանական լրագիրներ՝ «L'Epoque» և «Le Globe». Մի և նոյն տարին, ժիրարդէնին հրամայեցին պատգամաւորների ժողովից,—որտեղ արդէն պատգամաւոր արդէն չորրորդ անգամն էր ընտրվում,—այն պատճառով որ նա իր ժողովրդի ֆրանսիական ազգ չէ. 1842 թ-ին նա Բուրգանդիայի և Կասանլատրդէնի մէջ նորից պատգամաւոր ընտրվեցաւ, և այս անգամ նրա ընտրութիւնը թէպէտ վիճելի էր, բայց հաստատվեցաւ ձայների մեծ բազմութեամբ. 1847 թ-ին նա գատի կանչվեցաւ մենիստարութիւնը վիրաւորելու համար, բայց գատարանից արդարացաւ գուրս եկաւ. 1848 թ-ի փետրվարի 7-ին, ժիրարդէն, յեղափոխութիւնը նախատեսելով, հրատարակեցաւ պատգամաւորների լիազորութիւններից. փետրվարի 24-ին, առաւօտեան, նա Տիւլերիան պալատը մտաւ և հրամայեց յանձնել թագաւորին իր ստորագրութեամբ մեկ նամակ, որի մէջ, կարճ և գրեթէ խոսքերով պահանջում էր թագաւորի հրաժարականը և որչափեան դրաւեցաւ խնամակալութիւնը. Հանրապետական ժողովի ընտրութիւնների մէջ յաղթվելով, չը նայելով այն բանին, որ նա իր նշանաւոր յոդուածով «Confiance! Confiance!» վերնագրով, առաջին նշանաւոր հին կուսակցութիւնների միանալուն, հանրապետութեան հետ, ժիրարդէն արքենոգրաֆական ժողովում Մարքի Հանրապետութեան էր և նայն էր տալիս «լեռան» (la Montagne) հետ միասին, որին պատկանում էր իր ընտրութեամբ.

ժիրարդէն նշանակութիւն ստացաւ և յայտնվեցաւ ոչ որպէս կուսակցութեան գլուխ և առ